

նացն. զի բազում անգամ Քաղկեդոնականքն իբրեւ զաւճածուկ խառնեալ ի Հայք եւ պրզծեալ, երբեմն ի ժամանակս Հերակլայ, որ վեց կաթողիկոսք ՁԴ. ամ քիւրեցան: Եւ երբեմն լինէր յաւուրս Լեւոնի իշխանին Կիւլիկիա, որ երկոսասան եպիսկոպոսոք դաւնակից կամեցան. յորոց մի էր Ներսէս Լամբրոնացին, կամաւարեալ եւ ոչ կամաւ, որպէս հրամայէ Կիրակոս կոչեցեալ պատմագիր: Եւ է որ ի ժամանակս ի յասիւնանաւորացն Հայոց՝ որ չեն տունկ երկնաւորին՝ խլեալ ի բաց կորնչին ի գաւթե սրբոյ եկեղեցւոյ, որպէս Յոհան Ծործորեցին եւ աւակերտքն Սարգսի վարդապետի, եւ միշտ ցանեն զորոմն չարացն, որպէս ի մերում ժամանակի անիծեալ Նիկոլն Լեհեցի եւ շնծեր չՅովանէս Խուլն Կոստանդնուպոլսեցի: Եւ է որ սերմանեն միշտ զանխաբար ճահուկքն, որք են վարժ լեզուիս եւ գրոց Հայոց, որ բազում անգամ ի մերում աւուրս ԵՃ (=500) եւ այլ աւելի փոքրիկ տեսակս գրեալ Հայոց գրովն զհերձուածողական դաւանութիւնս իւրեանց եւ բերեալ շողոհորդելով ցրուեալ ի մեջ Հայոց. եւ իմ տեսեալ զբազումս ի տգիտաց որ առեալ են եւ գրեալ ի մեջ սուրբ գրոց եւ ասեն միշտ որպէս զդաւանութիւն ուղղափառաց: Եւ կու փութամ ի ձեռն ի բաց հերքել, մինչդեռ նոր է ոչ է հնացեալ եւ